ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«02» 10 2024թ.
No 011659

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇՈՒՇԱՆ ԵՐԻՑՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Պուշկինի փ. 53,
էլ. փոստի հասցե՝ shushanyeritsyan83@gmail.com)

Հարգելի՛ տիկին Երիցյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի «Անհատ ձեռնարկատեր Շուշան Երիցյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02910/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 644-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մերի Առաքելյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (266)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 16 հոկտեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 644-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇՈՒՇԱՆ ԵՐԻՑՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02910/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Շուշան Երիցյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Շ. Երիցյան**) վերաբերյալ թիվ ՀԳ-02910/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 2-ի «Անհատ ձեռնարկատեր Շուշան Երիցյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 389-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 389-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02910/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «մանկական ժամանցի կենտրոն» և «մանկապատանեկան զարգացման կենտրոն» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ ԱՁ Շ. Երիցյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

ԱՁ Շ. Երիցյանը թիվ 389-Ա որոշումը ստացել է 2024 թվականի հուլիսի 25-ին և 2024 թվականի հուլիսի 30-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում:

ԱՁ Շ. Երիցյանը, ի թիվս այլնի, հայտնել է, որ ««Երեքնուկ» մանկապատանեկան զարգացման կենտրոն» անվանումը դրվել է՝ առանց հաշվի առնելու «Նախադպրոցական

կրթության մասին» օրենքով սահմանված այն պահանջը, ըստ որի «կենտրոնը» համարվում է նախադպրոցական ուսումնական հաստատության տեսակ:

ԱՁ Շ. Երիցյանը հայտնել է, որ հանձն է առնում «Երեքնուկ»-ի ֆեյսբուքյան պրոֆիլում և արտաքին գովազդային պաստառի վրա անվանումը վերախմբագրել՝ հանելով դրանից «զարգացման կենտրոն» կամ «կենտրոն» բառակապակցությունը կամ բառը՝ նախադպրոցական կրթական հաստատության պատրանք չստեղծելու համար:

ԱՁ Շ. Երիցյանը հայտնել է, որ «Երեքնուկ»-ը նախադպրոցական կրթական հաստատություն չէ և ըստ այդմ չի կարող հավակնել ձեռք բերելու համապատասխան լիցենզիա՝ իր գործունեությունն իրականացնելու համար: Մասնավորապես, «Երեքնուկ»-ը չի իրականացնում կրթության պլանավորված գործընթաց, կրթական ծրագրեր՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչին համապատասխան:

«Երեքնուկ»-ի այցելուներն ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական տարբեր տարիքի երեխաներ են:

«Երեքնուկ»-ում հոգ է տարվում երեխաների անվտանգության, հիգիենայի, զբաղմունքի մասին, կազմակերպվում են խաղեր, հեքիաթների, պատմվածքների ընթերցում:

«Երեքնուկ»-ի տարածքում, վարձակալության հիմունքներով, գործում են պարի, կառատեի խմբակներ, որոնց հաճախում են ամենատարբեր տարիքային խմբերի երեխաներ և պատանիներ:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-011450 գրությամբ ԱՁ Շ. Երիցյանին առաջարկվել է ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված «Անհատ ձեռնարկատեր Շուշան Երիցյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02910/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-011488 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է եռամսյա ժամկետով երկարաձգել Վարույթի ժամկետը՝ հայտնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, իսկ Տեղեկանքի առնչությամբ ԱՁ Շ. Երիցյանի լսված լինելու իրավունքն իրացնելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռք բերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար՝ Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի հոկտեմբերի 2-ից եռամսյա ժամկետով երկարաձգել անհատ ձեռնարկատեր Շուշան Երիցյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02910/24 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2024 թ. հոկտեմբերի 1
Երևան